## ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ, ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ՝ ԶԱՏԿԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ: ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՄՈՒՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍՏԱՏ ՀԱՎԱՏ, ՀՈՒՅՍ, ՍԵՐ ԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆ:

### ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԶԱՏԻԿ

Զատիկ բառը նշանակում է պատում, բաժանում, հեռացում մեղքերից, իսկ իր վերջնական իմաստով՝ վերադարձ առ Աստված: Զատիկը և Հին, և Նոր Կտակարաններում համարվում է մեծագույն տոնը: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարությունը մանրամասնորեն ներկայացված է բոլոր չորս Ավետարաններում (Մատթ. ԻԸ 1-8, Մարկ. ԺԶ 1-8, Ղուկ. ԻԴ 1-12, Հովհ. Ի 1-10), որոնցում պատմվում է, որ Տիրոջ խաչելությունից և մահվանից հետո՝ երեկոյան, բարեպաշտ հավատացյալները նրա մարմինը իջեցնում են խաչից եւ դնում են նոր վիմափոր գերեզմանի մեջ, որի մուտքը փակում են մեծ վեմ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը և Սողոմեն, գնում են գերեզմանը խնկարկելու, բայց պարմանքով ականատես են լինում, որ քարայրի մուտքի մեծ քարը բացված է, և գերեզմանը թափուր: Մինչ նրանք տարակուսանքով լցված այս ու այն կողմ էին նայում, նրանց են երևում լուսեղեն երկու հրեշտակներ՝ ու ասում. «Ինչո՞ւ եք ողջերին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ Հարություն առավ» (Ղուկ. ԻԴ 4-9): Յուղաբեր կանայք, որ եկել էին օծելու և խնկելու Տիրոջ մարմինը շտապում են առաքյալների մոտ, նրանց տալով Տիրոջ փրկական Հարության ավետիսը: Հարությունից հետո Քրիստոսը նորից երևում է նրանց, ինչպես Ավետարանն է ներկայացնում՝ ավելի քան հինգ հարյուր հոգու:

Քրիստոսի Սուրբ Հարությունը կամ Զատիկը կապված է ազատագրության և փրկագործության պատմական զույգ իրողությունների հետ:

Առաջինը Հին Կտակարանի այն դրվագն է, երբ հրեաները, Աստծո խնամածությամբ և Մովսեսի առաջնորդությամբ անցնելով Կարմիր Ծովը՝ փրկվեցին եգիպտական գերությունից, որից ձերբազատվելը խորհրդանշում էր մեղքի և մահվան երկրից դուրս գալը, պատվելը և դեպի Ավետյաց երկիր ճանապարհ ընկնելը: Հին Ուխտի Զատիկը նախատիպն ու նախօրինակն էր Հիսուս Քրիստոսի ինքնակամ կոհաբերության: Քանի որ, ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Այս բոլորը իբրեւ օրինակ պատահեց նրանց հետ, բայց մեկ համար որպես խրատ գրվեց» (Ա Կորնթ. Ժ 11), ինչպես նաև ասում է. «Քրիստոսը՝ մեր Զատիկը, մորթվեց» (Ա Կորնթ. Ե 7):

Երկրորդը՝ Քրիստոսի Հարությունն է: Քրիստոսը՝ իբրև գառն Աստծո, Իր կենդանարար արյունը թափեց աշխարհի և մեղավոր մարդկության համար, խաչվեց և երրորդ օրը հարություն առավ մեռելներից, որպեսզի սրբելով մեղքերից՝ մեկ արժանի դարձնի հավիտենական կյանքին:

Եգիպտոսից դուրս գալու խորհրդով հին աշխարհը խորհրդանշաբար ազատվեց մարմնավոր գերությունից, իսկ այժմ Քրիստոսի Հարության խորհրդով, մարդկությունը փրկվեց մեղքի և մահվան տիրակալությունից՝ խավարից դառնալով դեպի աստվածգիտության լույսը:

«Ահա գառն Աստծո, որ բառնա զմեղս աշխարհի», Քրիստոսի մասին այս մարգարեացավ Ս. Հովհաննես Մկրտիչը, նախ ցույց տալով, որ Հին Կտակարանյան պատկական գառը օրինակն է Հիսուս Քրիստոսի, ապա նաև, որ Քրիստոսը պետք է քանդեր մարդկային մեղքի կապանքները: Աստվածորդին մեր մեղքերի համար մեռավ և Իր Սուրբ Արյամբ սրբեց մեկ մեղքերից, որպեսզի Նրա անունով հավիտենական կյանք ունենանք, քանի որ ասաց. «Ես եմ հարություն եւ կյանք, ով հավատում է ինձ թեպետեւ մեռնի, կապրի» (Հովհ. ԺԱ 25)

Քրիստոսի խաչի վրա մահվամբ և Հրաշափառ Հարությամբ մարդը վերստին հավիտենական կյանքի հրավեր ստացավ Աստծո կողմից: Տիրոջ խաչելությամբ և Հարությամբ հաստատվում է կյանքի ու անմահության գաղափարը: Բոլոր նրանք, ովքեր Քրիստոսին ընդունում են որպես իրենց Փրկիչ և Տեր, մի օր իրենք նս պետք է Քրիստոսի պես հարություն առնեն, քանի որ «Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես եւ Քրիստոսով ամենքը պետք է կենդանանան» (Ա Կորնթ. ԺԵ 22): Քրիստոսի Հարությունը դարձավ քրիստոնեական հավատքի և վարդապետության հիմքը:

Քրիստոսը Հարություն առնելով մեռելներից, իր հետ հարություն տվեց նաև մեր՝ մեղքերի ու մահվան մեջ ընկած բնությունը, խորտակելով մահը և խափանելով ապականությունը՝ ըստ Ավետարանի խոսքի. «Ո՞ւր է, մահ, քո հաղթությունը, Ո՞ւր է, դժոխք, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55):

Զատկին, որպես Քրիստոսի թափված արյան խորհրդանիշ կարմիր ձու ենք ներկում. ձուն ներկայացնում է աշխարհը, իսկ կարմիրը՝ Տիրոջ արյունը:

Ձու ներկելու երևույթը գալիս է առաջին դարից, ըստ ավանդության՝ Մարիամ Մագդաղենացին մեկնում է Հռոմ Ավետարանը քարոզելու: Նա ներկայանում է Տիբերիոս կայսրին, վկայում է իր քրիստոնեական հավատքը և նրան նվիրում կարմիր ներկված ձու ողջունելով. «Քրիստոս Հարյավ ի մեռելոց»:

# ՀԵՐՈՍ ԶՈՐԱՎԱՐԸ

## ԱՅՍ ՏԱՐԻ ԼՐԱՆՈՒՄ Է ՄԻՔԱՅԵԼ ՊԱՐՍԵՂՈՎԻ ԾՆՆԴՅԱՆ 115-ԱՄՅԱԿԸ



*Առաջին համաշխարհային, սովետա-ֆիննական և Հայրենական մեծ պատերազմների մասնակից, հրետանու գեներալ-գնդապետ, Սովետական Միության հերոս, բազմաթիվ շքանշանների ասպետ Միքայել Արտեմի Պարսեղովը մեր երկրի ականավոր զորահրամանատարներից էր:*

Ծնվել է Միքայել Պարսեղովը 1899 թվականի հունիսի 15-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մեշադիշեն գյուղում, խեցեգործի ընտանիքում: Նա 12 տարեկան էր, երբ զրկվեց ծնողներից և, թողնելով հարազատ գյուղը, տեղափոխվեց Միջին Ասիա ու դարձավ շարքային բանվոր:

1916-1917 թվականներին Միքայել Պարսեղովը մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին, հրետանային զորամասի կազմում կռվել Կովկասյան ռազմաճակատում: Կամավորագրվելով նորաստեղծ Կարմիր բանակին՝ նա 1918-1920 թվականներին պայքարել է Միջին Ասիայում սովետական իշխանության հաստատման ու ամրապնդման համար: Մարտնչել է Անդիժանի, Կոկանդի, Նամանգանի, Ֆերգանայի շրջաններում:

1922 թվականին Միքայել Պարսեղովը ավարտել է Տաշքենդի ռազմահրետանային ուսումնարանը: Նույն թվականից ծառայել է Լենինգրադի զինվորական օկրուգում՝ որպես հրետանային մարտկոցի հրամանատար: Ապա նա հրետանային դիվիզիոնի հրամանատար է եղել Մերձվոլգյան զինվորական օկրուգում, Անդրբայկալյան զինվորական օկրուգում՝ 57-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետ: 1936 թվականին նա ավարտել է Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, նշանակվել 19-րդ հրաձգային կորպուսի ծանր հրետանային գնդի հրամանատար: 1937 թվականին՝ նշանակվել է Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանու պետ:

1939-1940 թվականներին Միքայել Պարսեղովի գլխավորած 123-րդ հրետանային դիվիզիան մասնակցել է սպիտակ ֆինների ջախջախմանը, եղել է Մաներհեյմի գիծը ճեղքողների շարքերում: Այդ մարտերում ցուցաբերած խիզախության և ռազմական հմտության համար նա 1940 թվականի մարտի 21-ին արժանացել է Սովետական Միության հերոսի կոչման: Նույն օրն էլ ստացել է կորպուսի հրամանատարի զինվորական աստիճան:

Սովետական Միության հերոսի բարձրագույն կոչման արժանացան նաև Մ. Ա. Պարսեղովի գլխավորած զորամիավորման ավելի քան 20 մարտիկներ և հրամանատարներ:

Հայրենական մեծ պատերազմի սկզբին Պարսեղովը եղել է Կիևի հատուկ զինվորական օկրուգի հրետանու պետ, 1941-ի նոյեմբերից՝ Հարավ-Արևմտյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ, 1942-ի հունվարից՝ 40-րդ բանակի հրամանատար: Նույն թվականի ամռանը Պարսեղովը նշանակվել է Հեռավոր-Արևելյան ռազմաճակատի հրետանու պետ:

1945 թվականին, որպես Հեռավոր-Արևելյան 2-րդ ռազմաճակատի հրետանու հրամանատար, մասնակցել է միլիտարիստական Ճապոնիայի ջախջախմանը: Պարսեղովի ղեկավարած զորքերը մյուս ռազմաճակատների զորքերի հետ ջարդուփշուր արին Մանջուրիայում ճապոնացիների ամրությունները և ջախջախեցին Կվանտունյան բանակը: Պարսեղովի զորքերը մասնակցեցին Խարբինի և Չինաստանի մյուս քաղաքների ու բնակավայրերի ազատագրմանը, ինչպես նաև Սախալինի հարավային մասից և Կուրիլյան կղզիներից վռնդեցին միլիտարիստներին:

Պատերազմի ավարտից հետո Պարսեղովը եղել է Հեռավոր-Արևելյան զինվորական օկրուգի հրետանու հրամանատար: 1948 թվականին նա ավարտել է Գլխավոր շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան: 1954-ից եղել է Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանու հրամանատար:

1958 թվականին Մ. Ա. Պարսեղովին շնորհվել է հրետանու գեներալ-գնդապետի կոչում:

1962 թվականից մինչև կյանքի վերջը Պարսեղովը Մ. Ի. Կալինինի անվան հրետանային ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետի պետն էր:

Նա արժանացել է Լենինի 3 շքանշանների, Կարմիր դրոշի 4, Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանների և բազմաթիվ մեդալների:

Մահացել է հերոս զորավարը 1964 թվականի ապրիլի 27-ին, Պետերբուրգում, թաղված է Բոգոսլավյան գերեզմանոցում: